ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հուլիսի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ, 70-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-337-14.06.2018-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը և «Պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 962 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-337-14.06.2018-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է նվազեցնել եկամտային հարկի դրույքաչափերը՝ մինչև 500 հազ. դրամ ամսական եկամտի դեպքում սահմանելով 20 տոկոս, 500 հազ. դրամից ավելի եկամտի դեպքում սահմանելով 25 տոկոս, ներկայումս սահմանված՝ մինչև 150 հազ. դրամ՝ 23 տոկոս, 150 հազարից 2 մլն դրամ՝ 28 տոկոս և 2 մլն դրամից ավելի եկամտի դեպքում 36 տոկոս դրույքաչափերի փոխարեն:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ ընդունելի ենք համարում նախագծի հիմնավորմամբ ներկայացված այն նկատառումները, որ եկամտային հարկի դրույքաչափերի բարձր լինելը կարող է բացասական ազդեցություն ունենալ տնտեսական աճի վրա և ստեղծել նախադրյալներ ֆիզիկական անձանց եկամուտների թերհայտարարագրման համար: Թերևս հենց այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով ամրագրվել է տնտեսության իրական հատվածում ներդրումների կատարումը խթանելու նպատակով կապիտալի և եկամտի հարկումից աստիճանաբար սպառման հարկման վրա շեշտադրում կատարելու անհրաժեշտության վերաբերյալ ծրագրային դրույթ:

Այդուհանդերձ, գտնում ենք, որ եկամտային հարկի գծով հարկային բեռի վերանայումը համակարգային փոփոխություն է և, հետևաբար, դրան պետք է անդրադառնալ ոչ միայն նշված խնդիրների լուծման տեսանկյունից, այլ նաև եկամտային հարկի դրույքաչափերի նվազեցման արդյունքում առաջացող ռիսկերի չեզոքացման հնարավորությունների տեսանկյունից: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է եկամտային հարկի դրույքաչափերի նվազեցման արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի

եկամուտների կորստին և դրա հետևանքով ձևավորվելիք հարկաբյուջետային անկայունության հնարավոր ռիսկերին, ինչպես նաև դրանց չեզոքացման հնարավորություններին:

Մեր գնահատմամբ նախագծով ներկայացված առաջարկությունների ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների կորուստը կազմելու է տարեկան 45-47 մլրդ դրամ: Հետևաբար, նախագծով ներկայացված առաջարկության ընդունման դեպքում օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջանում ձեռնարկել միջոցներ բյուջետային եկամուտների նշված կորուստները փոխհատուցելու համար, հակառակ դեպքում կձևավորվի առաջիկա տարիների բյուջետային եկամուտների բավականին մեծ ճեղքվածք, ինչն ընդունելի չէ:

Այդ նկատառումներով եկամտային հարկի դրույքաչափերի նվազեցման ուղղությամբ իրականացվող քայլերն անպայմանորեն պետք է ուղեկցվեն հարկային քաղաքականության ուղղությունների վերանայմանն ու վարչարարական գործիքակազմի կատարելագործմանն ուղղված միջոցառումներով, որոնք թույլ կտան հնարավորինս փոխհատուցել եկամտային հարկի դրույքաչափերի նվազեցման հետևանքով բյուջետային եկամուտների կորուստները:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ ներկա փուլում Հայաստանի Հանրապետության կառավարությունը Արժույթի միջազգային հիմնադրամի մասնագետների հետ համատեղ իրականացնում է ընդհանուր հարկային համակարգի վերլուծություն՝ գնահատելու համար հարկային քաղաքականության և վարչարարության համարժեքությունն առկա տնտեսական իրավիճակին: Այս առումով գտնում ենք, որ հարկային համակարգում հնարավոր փոփոխությունները պետք է կատարվեն համապարփակ ձևով, և առանձին ուղղություններով տեղային փոփոխություններ կատարելը նպատակահարմար չէ:

Ամփոփելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնության հեղինակներին առաջարկում է ներկա փուլում ձեռնպահ մնալ առաջարկվող օրենսդրական փոփոխություն կատարելուց և խնդրո առարկա հարցի քննարկմանն անդրադառնալ արդեն իսկ նշված վերլուծությունների ավարտից և արդյունքների

ամփոփումից հետո՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդհանուր հարկային համակարգի վերանայմանն ուղղված առաջարկությունների քննարկման համատեքստում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում սահմանել եկամտային հարկի ամսական դրույքաչափերի հետևյալ սանդղակը՝ մինչև 500 հազ. դրամը ներառյալ՝ 20 տոկոս, 500 հազ. դրամից ավելի եկամտի դեպքում 25 տոկոս, ներկայումս սահմանված՝ մինչև 150 հազ. դրամ՝ 23 տոկոս, 150 հազարից 2 մլն դրամ՝ 28 տոկոս և 2 մլն դրամից ավելի եկամտի դեպքում 36 տոկոս դրույքաչափերի փոխարեն:

Հաշվի առնելով նշվածը՝ հայտնում ենք, որ նախագծի ընդունումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների 45-47 մլրդ դրամով նվազեցման, իսկ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեների ծախսերի ավելացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեների եկամուտների նվազեցման չի հանգեցնի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2018 թվականի N 962 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-337-14.06.2018-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հուլիսի 16
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-337-14.06.2018-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-165-Ն հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հարկման բազայի ամսական մեծությունը	Եկամտային հարկի դրույքաչափը
մինչև 500000 դրամը ներառյալ	20 տոկոս
500000-ից ավելի դրամ	100000 դրամ՝ գումարած 500000 դրամը գերազանցող գումարի 25 տոկոսը

2) 2-րդ կետի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հարկման բազայի տարեկան մեծությունը	Եկամտային հարկի դրույքաչափը
մինչև 6000000 դրամը ներառյալ	20 տոկոս
6000000-ից ավելի դրամ	1200000 դրամ՝ գումարած 6000000 դրամը գերազանցող գումարի 25 տոկոսը

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման

Ընթացիկ իրավիճակը, առկա խնդիրները, ընդունման անհրաժեշտությունը

Մինչև 01.01.2018թ. գործող՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված էին եկամտային հարկի հետևյալ դրույքաչափերը. ամսական մինչև 120 հազ. դրամ եկամտի դեպքում՝ 24.4 տոկոս, 120 հազ. դրամից մինչև 2 մլն. դրամ եկամտի դեպքում՝ 26 տոկոս, 2 մլն. դրամից ավելի եկամտի դեպքում՝ 36 տոկոս: 01.01.2018թ. գործող՝ Հարկային օրենսգրքով սահմանվեցին եկամտային հարկի հետևյալ դրույքաչափերը՝ ամսական մինչև 150 հազ. դրամ եկամտի դեպքում՝ 23 տոկոս, 150 հազ. դրամից մինչև 2 մլն. դրամ եկամտի դեպքում՝ 28 տոկոս, իսկ 2 մլն. դրամից ավելի եկամտի դեպքում՝ 36 տոկոս: Արդյունքում, եկամտային հարկի գծով հարկային բեռը շարունակում է բարձր մնալ, ինչը բացասաբար է ազդում տնտեսության մրցունակության վրա: Խնդիրն այստեղ կայանում է նրանում, որ եկամտային հարկի գծով հարկային բեռի ծանրությունն, ըստ էության, իր վրա է վերցնում գործատուն՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողը, քանի որ վարձու աշխատողներին հետաքրքրում է իրենց տնօրինվող եկամտի մեծությունը և գործնականում աշխատանքային հարաբերությունները ձևավորվում են հենց տնօրինվող աշխատավարձի մեծության շուրջ: Արդյունքում եկամտային հարկի բարձր դրույքաչափերը բարձրացնում են ապրանքների ու ծառայությունների ինքնարժեքը, հետևաբար նաև՝ գները, ինչը իր հերթին հանգեցնում է պահանջարկի կրճատման ու խոչընդոտում է տնտեսական զարգացումը:

Առաջարկվող լուծումը

Նախագծով առաջարկվում է էականորեն նվազեցնել եկամտային հարկի գործող դրույքաչափերը՝ ամսական մինչև 500 հազար դրամ հարկվող եկամտի համար սահմանելով 20 տոկոս, իսկ գերազանցող մասի համար՝ 25 տոկոս դրույքաչափ:

Առաջարկի հիմնական նպատակն այն է, որ եկամտային հարկի դրույքաչափերի դիֆերենցված նվազեցումը՝ ըստ աշխատավարձի առաջարկվող միջակայքերի (0-500.000 և 500.000-ից ավել), պետք է նպաստի հայտարարագրվող աշխատատեղերի և աշխատավարձերի ավելացմանը: Բանն այն է, որ մինչև 500.000 դր. աշխատավարձ ստացող անձանց տեսակարար կշիռը աշխատողների ընդհանուր թվում կազմում է ավելին քան 90% և աշխատողների տվյալ զանգվածի համար սահմանելով շահութահարկի 20 % դրույքաչափին հավասար եկամտային հարկի դրույքաչափ, ըստ էության, վերացվում է գործատուի մոտիվացիան հարկային պարտավորություններից խուսափելու առումով: 500.000դր. ավել աշխատավարձ ստացողների համար առաջարկվող նվազեցումը կձևավորի ռացիոնալ մոտիվացիա գործատուների կողմից հարկային օրենսգրքի պահանջներին հետևելու տեսակետից՝ միաժամանակ որոշակիորեն պահպանելով տվյալ հարկատեսակի գծով ֆիսկալ սպասելիքները: Այսպիսով, օրենսդրական նախաձեռնության հեղինակները համոզված են, որ այս առաջարկով նպաստում են աշխատուժի ստվերային շրջանառության էական կրճատմանը, հետևաբար բյուջետային եկամուտների ավելացմանը, որը կփոխհատուցի դրույքաչափերի առաջարկվող նվազեցման հետևանքով բյուջետային եկամուտների նվազեցումը:

Ակնկալվող արդյունքը

Ակնկալվում է, որ նախագծի ընդունումը, բոլոր հավասար պայմաններում, կնպաստի նաև մատուցվող ծառայությունների և թողարկվող ապրանքների ինքնարժեքի իջեցմանը, հետևաբար և հանրապետությունում տնտեսական ակտիվության բարձրացմանը, գործարար միջավայրի բարելավմանը: